№ 6 ՅՈՒՆՎԱՐ 1894

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԱՑՐ ՈՒ ԲԵՆ

Յունվար, 1894 թ.

Անցեալ անգամ մենք վերջացրինք այս հարցով, թէ ինչ կարգեր կարող են ապահովել ժողովրդի արդարացի պահանջները:

Հարկաւոր է պարզ դնել հարցը և աներկիւղ քննել դրան, որովհետև անխղճութիւն է քաղցածին հացի տեղ քար տալ, որովհետև ապշութիւն է դարման չանել հիւանդի այն վէրքին, որից իսկապէս տանջվում է ինքը հիւանդը:

Սակայն "Դաշնակցութեան" սկիզբ առնելուց առաջ այդ հարցերը դրել և ըստ իւրեանց մշակել են երկու աւելի հին հայ յեղափոխական օրգաններ. — "Արմենիա" և "Հնչակ": Ի՞նչպէս են հասկացել այդ օրգանները հայի ցաւը և նրա ապագան բարւոքելու անհրաժեշտ պայմանները:

Իսկապէս "Արմենիայի" մասին, այն "Արմենիայի", որը, ինչպէս ինքը վաղուց յայտարարել է, դադարել է յեղափոխական կազմակերպութիւն, յեղափոխական կենդանի գործի օրգան լինելուց, որն այժմ զբաղված է աւելի փողի և ուրիշ տեսակ վիճակախաղեր կազմելով իր բաժանորդների համար,- իսկապէս, ասում ենք, "Արմենիայի" մասին չարժէր խօսել. չարժէր, որովհետև պարզ է, որ հանդերձ իր յեղափոխական երեմիականներով, այդ թերթը հասել է բարոյական մահուան, իր նիւթականն ապահովելու միակ և թշուառ խնդրին:

Բայց մեր միտքը պարզելու համար, աւելի լաւ է, խօսենք՝ աչքի առաջ ունենալով հասարակութեան մէջ պտտող, փոքր 'ի շատէ յայտնի կարծիքներ, ծրագիրներ, ուղղութիւններ: Ինչքան և անորոշ լինէր "Արմենիայի", այդ նախկին "Հայրենասիրաց Միութեան" օրգանի նախկին ծրագիրը, այն ծրագիրը, որը տարէցտարի շաբաթը երկու անգամ նոյն ոչինչ չը պարզող խմբագրութեամբ լոյս էր տեսնում թերթի առաջին սիւնեակում՝ սակայն այս և այն խմբագրական առաջնորդողներից նկատելի էր, որ "Արմենիայի" համար առաջնակարգ տեղ էին բռնում Թիւրքիայում տիրող վարչական-քաղաքական թերութիւնները: Վերացընել այդ թերութիւնները՝ և հայի լացը բաղդաւոր ժպտի, հայի թշուառ կենցաղը կատարեալ անդորրութեան պիտի վերափոխվի: Այդպէ՞ս է արդեօք:

Աստուած գիտէ, ինչ էր հասկանում պ. Փորթուգալեանը վարչական բարեփոխումներ ասելով, բայց ամենայն համբերութեամբ կարդալով այդ քարոզները՝ մտածում էինք. ենթադրենք թէ, դիւթական մի շարժուածքով Թիւրքիայում իրականացաւ ներկայ ժամանակներիս համար առաջնակարգ մի եւրոպական վարչական դրութիւն. ի՞նչ կը լինենք մենք դատած դորանով: Ի հարկէ շատ բան, բայց ոչ այն բոլորը, ինչ հարկաւոր է ժողովրդին, ոչ այն դրութիւնը, որի անունով միայն մենք ձեռներս սրտերիս վրա դրած, առանց մեր խղճի առաջ ամաչելու, կարող լինէինք բարձրաձայն գոչել ժողովրդին. "Հայ ժողովուրդ, ոտ դի՛ր յեղափոխութեան դժոխային ուղին. կռուի՛ր, մեռի՛ր, զոհի՛ր որդիքդ ու ունեցածդ, և երբ կը ստանաս այդ վարչական դրութիւնը, դու բաղդաւոր կը լինես անպատճառ . . .

Պարսիկ գիւղացին անկախ է, իր երկրում նա քաղաքականապէս իշխող է, բայց ապահովի է նրա կացութիւնը, ազատ է՞ նա. — ո՛չ, նա ստրուկ է և աղքատ: Ռումանիան ազատ է. նրա քաղաքական կարգերն՝ առնված են եւրոպական սահմանադրական մոդելներից, բայց ի՞նչ է նրա գիւղացու դրութիւնը, եթէ ոչ կատարեալ ճորտութիւն. բոլոր աշխատաւոր, բայց մեծ մասամբ անհող գիւղացիք իրականապէս պատկանում են մի քանի հազար հողատէր՝ ազնուականների: Իտալական ժողովուրդը, որը դեռ երէկ թօթափեց իր վրայից Աւստրիայի լուծը և ձեռք բերեց քաղաքական ազատութիւն, ներկայումս հեծում է դառն աղքատութեան տակ: Եւ Սիցիլիան, այն Սիցիլիան, որ իտալական ապստամբութեան յենարանն էր կազմում, որ հա-

մարձակ բարձրացրեց ապստամբութեան դրօշակն օտար կառավարութեան դէմ, հենց այս բոպէիս զէնքը ձեռքին կռվում է իր սեփական, իր արիւնով ստեղծված կառավարութեան դէմ...

Ութսուն միլիօն ռուս ժողովուրդը, քաղաքականապէս ազատ լինելով հանդերձ՝ այսօր այնքան աղքատ է և տգէտ, որ համարեա կենդանիների կեանք է վարում: Վերջապէս Եւրոպայի առաջնակարգ ազատ սահմանադրական երկրներում, ժողովրդի առնուազը երկու երրորդ մասը ապրում է օրէցօր, խաղում է ապրանք ստեղծող հասարակ մեքանայի դեր. անձնական և հասարակական յարաբերութիւնները մարդու համար այդ երկրներում այնքան խիստ որոշվել են, որ ոչ մի երկրում, նոյն իսկ ամենայետադէմ երկրների հետ համեմատած, անհատն այնքան երկիւղ չէ կարող ունենալ հենց վաղն անգործ մնալ և փողոցի մէջ սովից մեռնել, որքան հենց այդ քաղաքակրթութեան մեծահոչակ որրաններում: Ով փոքր 'ի շատէ ծանօթ է եւրոպական ներկայ կեանքին՝ նա կարօտ չէ բացատրութիւնների. յամենայն դէպս յիշենք, որ Լօնդօն քաղաքը միայն ունի 100,000 փողոցային մուրացկաններ, որ բանուորների մշտական գործադուլներն աննկարագրելի չարիքներ են առաջ բերում այդ միլիօնաւոր դասակարգի համար, դասակարգի, որը բացի իր ձեռքից և ոտքից՝ չունի ուրիշ ոչ մի սեփականութիւն, որ եւրոպական բոլոր պարլամենտներում սոցիալիստ դէպուտատների թիւ տարեցտարի աւելանալը, բանուորական յուզումները նշան են խիստ դժգոհութեան տիրող կարգերի դէմ, որ վերջապէս անարխիզմի սարսափահար գործունէութիւնը, իրրև մեծամասնութեան դրութեան վերաբերեալ անզուսպ բողոք՝ ծնվել և զարգանում է հենց այդ երկրներում:

Ընդհանրացնելով մեր ասածները եւրոպական կարգերի բացասական կողմերի մասին՝ մենք կը կամենայինք ընթերցողի հետ գալ հետևեալ եզրակացութեան. պարզ է, որ Եւրոպան իր քաղաքական կազմակերպութիւններով այսօր բարձր է ուրիշ երկրներից. միևնոյն ժամանակ ապացուցված պիտի համարել, որ այդ կազմակերպութիւնները անկարող են ապահովել ժոլովրդի բարեկեցութիւնը և հետևաբար իրենց տիպով դեռ շատ և շատ ստոր պիտի համարվին:

Մեզ կարող են ասել, որ նոյն իսկ Եւրոպայում չենք գտնում այնպիսի քաղաքական ձևեր, որոնց մենք հաւանէինք, նախանձէինք: — Ճիշդ է. սակայն հարցը հաւանելու, չը հաւանելու մէջ չէ. հարցը միմիայն նրանումն է, որ մենք պարտաւոր ենք չը ծածկել մեր հասարակութիւնից եւրոպական քաղաքական կազմակերպութիւնների անկարողութիւնն իրենց ժողովրդի բարօրութիւնն ապահովելու, տալու նրան այն, ինչի նա այսօր ձգտում է:

Ծածկել այս ամենը ժողովրդից, երբ մենք նրան բարօրութեան անունով կոչում ենք դէպի յեղափոխութիւն՝ այդ անխղճութիւն է մի կողմից՝ և անհաշիւ կարճատեսութիւն միւս կողմից: Թող նա իմանայ այս ամենը, որպէս զի յեղափոխական մի շարժումից յետոյ, իրականացած չը տեսնելով իր իղձերը՝ յուսաբեկութեան և ռեակցիայի չը հակի. թող նա իմանայ այդ ամենը, որպէս զի երբէք նա երես չը դարձնի երկրի յառաջադէմ ինտելիգենտ- յեղափոխականներից, որպէս զի վաղը կարճատեսութեամբ չը մերժէ այն, ինչ այսօր արեան գետեր թափելով՝ ձեռք բերած կը լինի...

(Կը շարունակվի)

ԱՐԱԲՕՅԻ ԿՈՒԻԼԸ

Անցեալ համարում մենք հաղորդեցինք, իբրև լուր, Արաբոյի խմբի կոտորվելու մասին: Դժբաղդաբար այդ լուրը մասամբ հաստատվում է: Ընդհարումը տեղի է ունենում Խնուսի և Մուշի մէջ գտնված գիւղերից մէկում: Դորա հետևանքը շատ կորստաբեր է եղել մեզ համար: Կուռդ խմբից ազատվում է մի մշեցի երիտասարդ, որը վիրաւորված է և այժմ գտնվում է ապահով տեղում, Տաճկաց սահմանից դուրս: Ահա նրա պատմածն այդ դէպքի մասին:

"Ես Տամատեանի և Մ-ի մարդն եմ: Յունաստանից վերադառնալով, անցայ Խնուս և սպասում էի Մ-ին: Լսեցի Արաբոյի Խնուս գալն իր 17 ընկերներով, Լևոնի մահը.-կնացի միացայ նրա հետ, յայտնելով կատարեալ պատրաստականութիւն հնազանդվիլ նրա բոլոր հրամաններին: Միևնոյն է Մ-ն է, թէ Արաբօն, կամ Վարդանը. ամենքն էլ գործին են ծառայում:

Արաբօն Ղօզլի սարից ազատվելով՝ իջնում է համանուն գիւղը, այնտեղից անցնում Շաբատին, ուր և ինձ ընդունեց իր խմբի մէջ: Անցանք Խաչեաքեօփրու, Խարաչօբան, Համզալէյլս գիւղերը (իբրև թէ մահմեդականութիւն ընդունողներ են եղել այդ տեղերում,- սուտ է բոլորովին), և հասանք Խոշգելդի: Այստեղ մենք մտանք 6 ընկերներով. Վարդանն էր, Արաբօն, Աւօն, Մարտօն, Բուլղարն և ես: Մնացած 10-ին տուինք 10 հրացան ու ցրվեցինք ամենքին իր գիւղը: Մութն ընկել էր. մտանք Խոշգելդի գիւղ և աննկատելի կերպով մտանք մի մարագ գիշերն անցկացնելու: Գիւղացիք իմացան: Տանտէրը խնդրում, աղաչում էր սարսափած՝ հեռանալ մարագից: — Տնով տեղով ինձ կը կորցնեն, կը պօռար նա: Նրան մի կերպ հանգստացրինք: Գիւղի տանուտէրը վախից ձի նստաւ և գիւղից հեռացաւ, որ եթէ մի բան պատահի, ինքն արդարանայ իր բացակայութեամբ: Նստել էինք մարագում, զէնքեր էինք սրբում և քաղցած՝ հացի վրա մտածում: Գիւղում ամեն մարդ սարսափած իր տունն էր քաշվել, դողում էին վախերից: Մարագի երթկիցը մի կտոր թուղթ ներս գցեցին: Վարդանը կարդաց. "Զգոյշ և արթուն կացէք, զէնքերդ պատրաստ. Աստուած գիտէ, թէ ինչ կարող է պատահիլ. վախեցած քեօխվան, որ գիւղից փախաւ,

կարող է մատնել: Չորս կողմերս քիւրդեր են:" Քիչ անցած, մտաւ մարագը մի երիտասարդ, մեզ կերակուր բերեց հօրից գաղտնի: Արաբօն նրան պատուիրեց մի քանի ընկերներով գիւղից դուրս, շրջակայքում հսկել, և հենց որ մի կասկածելի բան նշմարեն, իսկոյն մեզ իմաց տան, մինչև որ մենք մի քիչ հանգստանանք: Քիչ հանգստացանք, կէս գիշերին ճանապարհ ընկանք: Ոչինչ չը պատահեց: Երբ լուսացաւ, արդէն մտել էինք Գեօլ Առաշու ձորը. աւազակներս մտել էինք աւազականոցը: Այդ ձորի երկարութեամբ շարունակեցինք ճանապարհներս: Հասանք մի մացառոտ տեղ, նստանք աղբերակի մը մօտ, հանգստացանք: Կէս օրէն անցել էր: Արաբօն վեր կացրեց մեզ շարունակելու ճանապարհները նոյն գծով, ձորի երկարութեամբ, որ բացվում է Մշոյ դաշտի մէջ: Աւոյի վրա բարկացաւ Արաբօն, երբ նա խորհուրդ տուեց սպասել մինչև մթնելը: Քիւրդերի Գեօլ Առաշ գիւղը մօտ էր, նրա միջով էր ընկնում ճանապարհը: Դէ՛հ, Արաբօն է, ո՞ւմ կը լսէ: "Լեչէկ ծածկեցէք գլուխներդ, եթէ քիւրդերից պդքան կը փոխնաք," բարկացաւ Արաբօն: Ճանապարհ ընկանք: Հագնըված էինք Համիդիէյի ձևով: — Հռէստ կուգաք, հարցրեց մեզ մի քիւրդ կին, երբ մենք արդէն Գեօլ Առաշ գիւղով էինք անցնում: — Խնուսու, պատասխանեց Արաբօն: Անցանք: Քիչ էինք հեռացել գիւղից, պատահեցինք մի հնձւոր քիւրդի: Արաբօն նրա հարցին ևս բաւականութիւն տուեց, ասելով, որ Մօտքցի (Սասունցի) ենք: Աւօն, որ խմբից մի քիչ յետ էր մնացել, մօտեցաւ Արաբոյին. — Այդ քիւրդը մեր հայ լինելը հասկցած է, քո պատասխանից վերջը, երբ դուք անցաք, նա քթի տակը փնթփնթաց, թէ սոքա հայեր են, ով ինչ կուզէ ասէ: — Ոչինչ, թող հասկնայ, եղաւ Արաբոյի պատասխանը: Շարունակում ենք առաջ գնալ: Ցանկարծ Աւօն ձայն է տալիս, թէ քիւրդերը հրացանները ձեռքերին դուրս են գալիս գիւղից դէպի մեր կողմը: Հազիւ նա վերջացրեց իր խօսքը, երբ լսվեց հրացանի պայթում: Քիւրդերը, թեթև հագնված, թարմ, մեզ պէս ճանապարհից, անքուն գիշերներից չը յոգնած, արագութեամբ մօտենում էին: Լսվեց երկրորդ գնդակի շվվոցը: Այս անգամ Արաբօն պատասխանեց նոյն կերպով: Քիւրդերն արձակելով գալիս էին. մենք պատասխանում էինք և շարունակում ճանապարհներս: Քիւրդերը քանի գնում շատանում էին ու մօտենում: Հեռուից երեւում էր, թէ գիւղում ի՞նչ իրարանցում կար. բոլորը դէպի մեզ են վազում: — Տղէ՛ք, դէպի սարը, կանչեց Արաբօն: Ճանապարհներս փոխեցինք. բարձրանում էինք մացառների միջով: Հրացանաձգութիւնը տաքանում է: Մենք բարձրանում ենք սարի լանջով, իրարից բաւական հեռու: Քիւրդերն աչքերիս չեն երևում. հրացանի ծուխը բռնել է ձորը. մենք կրակում ենք դէպի այն կողմը, որտեղից ծուխ է երևում: Քիւրդերի մի մասը, ակներև է, բարձրացել է ձորի մեր հակառակ, հանդիպակ լանջը. ծուխեր են երևում մեզ հաւասար բարձրութեան վրա, ձորի ստորոտից: Հրացանների որոտը միախառնվում է արձագանգի հետ: — Ոտքիցս վիրաւորվեցի, տղէ՛ք, կանչեց յանկարծ ետևից Աւօն և կանգ առաւ: — Հրացանդ շարունակիր նստած դցել, եղաւ Արաբոյի պատասխանը, եթէ չես կարող քայլել, կամ քայլիր առաջ, քանի որ դեռ վերքդ տաք է: Աւօն յետ մնաց: Ցանկարծ ծխի քուլաներ երևացին և հրացանների պայթոց լսվեց մեր գլխի վրայից. մեզ շրջապատել էին անիրաւները: Գնտակները կարկտի պէս տեղում էին չորս կողմից. ձորը կրակի մէջ էր: Ցնցվեցի յանկարծ. ձեռքս չուլի պէս կախ ընկաւ, երկրորդ հրացանս ընկաւ գետին(ես երկու հրացան էի տանում). վիրաւորված էի ձախ թևիցս: Շարունակեցի աւելի արագ բարձրանալ: Վարդանն ու Արաբօն ցատկում էին մացառից մացառ, քարից քար, բարձրանալով սարն 'ի վեր: Ես հրացանս ու ձախ թևս աջովս բռնած, հետևում էի նրանց, երբ գնտակի տարափից, որ բռնկեցրեց ամբողջ ձորը, ընկան Մարտօն, Բուլղարն ու Աւօն, որ կաղալով վազում էր յետևից: Ես էլ ընկայ, բայց յօգնածութիւնից և արիւն գնալուց: Գլխիս վրայից անցնում էին իրար յետևից ջուխտ ջուխտ գնտակներ: Գնտակնե՜ր, գնտակնե՜ր... դատարկ մի՛ գնաք, սրտեր պատռեցէք... մրմնջում էի ես: Եթէ հնարաւոր լինէր, ես կը ցանկանայի, որ մի վարկեան կանգ առնեն այդ ջուխտ ջուխտ գնտակները, մօտենան ինձ, որ իրանց համբուրեմ ու ձեռքովս աւելի ուժեղ հրեմ, որ արագանան, քիւրդեր տապալեն: Այդ ջուխտ գնտակներն Արաբոյի ու Վարդանի գնտակներն էին, ես այդ ակներև զգում էի. շատ մօտից էր դրանց և ձայնը, և ուղղութիւնը...

Կորուստն ինձ համար տներկրայելի էր: Պայուսակս քանդեցի, մէջը թղթեր, շուշաներով դեղեր կար՝ մացառների մէջ պահեցի, որ անիրաւներն ինձ սպանելիս՝ պայուսակիս չը տիրանան: Մի ձեռքով մի կերպ դուրս շպրտեցի հրացանի միջի գատարկ փամփուշտը, նոյնպէս մի ձեռքով մի լիքը փամփուշտ դրի մէջը, հրացանի փողը բարձրացրի, մացառների ճիւղերն դրի և կիսապատկած սպասում եմ, թէ երբ պիտի գան քիւրդերը, և թէ ո՞վ պիտի լինի ինձ դիակի տեղ ընդունող քիւրդը... Գուցէ մի գազան էլ՝ աղասի, մի բէյ, մխիթարվում էի ես:

Գլխիս վերևից սլանում են շվշվալով իմ բարեկամ գնտակները: Նոյնպէս անբաժան, մէկը միւսի ետևից. զոյգ են սիրելի գնտակները,- կենդանի են նոքա, կենդանի են Արաբօն ու Վարդանը: Որքան շարունակվեց այդ՝ չը գիտեմ: Ցանկարծ լռեց ամեն ինչ: Մութն է... Բարձրանում եմ տեղիցս, վեր եմ առնում պայուսակս, թաղում եմ ուսիս, հրացանս էլ ուսիս գցում. ձախ ձեռքս բռնած՝ չորս կողմս եմ նայում, ականջ դնում: Գերեզմանային լռութիւն է տիրում: Առաջ եմ գնում դէպի վեր. տրեխներս կանաչից հարթված՝ սլացնում են ինձ բարձրացած մի քայլի փոխարէն 10 քայլ ներքև. նորից բարձրանում եմ, նորից ցած գլորվում. անօգուտ է... Դարձնում եմ երեսս դէպի ձորը, իջնում եմ զգուշութեամբ: Ձայներ եմ լսում, սիրտս տրոփում էդ-ակկթում եմ: Ոտքի ձայներն իջնում են ձորի լանջից ցածը: Վա՜յ, վա՜յ... քիւրդ կանանց լացի ձայն էր այդ. տեսնես, ում են կորցրել, ում են ողբում, մոա-

ծում էի ես և ուրախանում: Անցնում են, հեռանում: Հասնում եմ վերջապէս ձորի ստորոտը: Ոտքերի ձայներ եմ լսում: Լուռ գնում են: Քո՞վքեր են, Տէր Աստուած, Արաբօն, Վարդանը չը լինե՞ն . . . Սիրտս թրթռփում է ուրախութիւնից, քիչ է մնում պատռուի . . . "Բ-քե՛լ, Բ-քե՛լ" լսվեցին յանկարծ զգուելի ձայներ, գարշելի քիւրդական կոկորդային հնչիւնով: Անցան մօտիցս. 5-6 ձիաւորներ էին, որ շտապով գնում էին ձորով Մշու ուղղութեամբ: Գնում էին Մուշ եղելութեան մասին կառավարութեան յայտնելու, ինչպէս տեղեկացայ վերջը, երբ առաւօտեան լուսադէմին զգուշութեամբ մտայ "Փիլ" (Հայ և քիւրդ) գիւղը և այնտեղից մօտիկ գիւղը, բարեկամիս տունը: Նոքա զարմացան, ուրախացան, տեսնելով ինձ և սարսափեցին վրայիս արիւնից: Այստեղ կազդուրվեցի կերակրով և քնով: Մնալով բարեկամիս տանը մի քանի օր, փորձեցի անցնել Սասուն, բայց անհնարին եղաւ. սասունցոց և քրդերի մէջ մեծ կռիւ էր սկսվել. ճանապարհները, կիրճերը բռնված էին քիւրդերով: Վտանգը սաստիկ էր. ստիպվեցայ կրկին վերադառնալ. վերջս հոտել էր:

Խնուս վերադառնալիս՝ ճանապարհին լսեցի զանազան տեղեր, թէ Մշու գիւղերից մէկում 4-5 դիակ են դարսել և գնացող եկողին ցոյց են տալիս: Նրանցից երեքին ճանաչել են. դոքա Աւոյի, Մրտոյի և Բուլղարի դիակներն են եղել . . . Մնացած երկուսին, իսկ ոմանց ասելով՝ մէկին, ոչ ոք չի ճանաչել: Շատերը ասում են, որ Արաբօն դեռ ողջ է և մանէ գալիս դաշտում Տամատեանին ազատելու . . ."

ՏԱՐՈՆՈՅ ՃԳՆԱԺԱՄԸ՝
ԵՒ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՎԻՃԱԿ 'Ի ՍԱՍՈՒՆ

Մշոյ երկիրը յեղափոխական ճգնաժամի մէջ է, Սասունն ապստամբական վիճակի, որ ահա գրէթէ մի տարի կը տևէ. արիւնհեղութիւնք սովորութիւն դարձած են և խսպառ անկարելի է այլ ևս ընդհարմանց առաջն առնուլ և խաղաղութիւնը վերահաստատել: Նոյնն է նաև 'ի Մուշ և 'ի Դաշտն: Ուզելով որոշ գաղափար մը տալ Մշոյ և Սասնոյ ընդհանուր վիճակի վրայ, այնպիսի խառնաշփոթ տեսարան մը նկարագրելու ստիպված եմք, որ մենք արդարև կը շփոթիմք, թէ որ կողմէն պէտք է սկըսեմք և ուր պէտք է վերջացնեմք մեր նկարագրութիւնքն, թէ հազար ու մէկ կնճռոտ անցքերէն և պարագաներէն որոնք յիշատակենք և որոնք զանց առնէմք, զի ամբողջ վիճակն ստուերագրել մեզ միանգամայն անկարելի կերևայ: Զիարդ և ի՞նչ պարտինք կարևորագոյն դէպքերը նկարագրել սկսելով Մուշէն և Դաշտէն՝ բարձրանալով 'Ի Սասուն:

Քրդերի հարստահարութիւնք. Սուլթանի կառավարութիւն քիւրդ Աշիրէթներուն Համիտիէ հեծելազօր գրեց ոչ թէ հայոց և տեղական բնակիչներու ճնշումներն ու կեղեքումները վերջացնելու նպատակաւ, այլ հայ տարրը ոչնչացնելու համար: Քիւրդերն երբ Համիտիէ անուն ստացան, իրենց վայրենութիւններն անարգել սկսան յառաջ տանել: Մշոյ դաշտին արևմտեան մասին մէջ Մէհմէտ-Ալի անուն աւազակապետն, երբ Հայկերտ գիւղի Վրդօ անուն անձէն խուրձ մը խոտ կուզէ և սա չի տար, երկրորդ գիշեր ծառաներով 'ի միասին յարձակվելով յիշելոյն տան վրայ, դուռը կը կոտրէ. ընտանեաց մէջ մեծ ժխոր կը փրթի. Վրդոյի տղան կապելով գետին կը ձգեն և կը սկսեն ծեծել: Երբ գիւղացիք օգնութեան կը հասնին, անոնցմէ մի քանիսն ևս վիրաւորելով՝ յետ կը դարձնեն: Այս աւազակապետն առհասարելով՝ յետ կը դարձնեն: Այս աւազակապետն առհասարակ փորձանք է դառել գիւղացիներու գլխին. մէկ տեղ ցորեն կը պահանջէ, միւս տեղ՝ հաց, ոչխար և այլն, չունեցողներու տներ կը խուզարկէ, ոմանց մինչ մահ կը գանակոծէ. . . Միւս կողմէ Զաչան կոչեալ ցեղն ալ ամեն տեսակ աւազակութիւնք և թալանք, բռնութիւնք գործ կը դնէ: Այս ամեն չարեաց համար երբ կառավարութեան կը դիմեն, հարիւրապետ Հաջի-Փէյլին, որ իւր վայրենութեամբ և անգթութեամբ անուանի է, կը պատասխանէ մեր թագաւորը Համիտիէյի հեծելազօրքն ձեր ամբողջ ազգին հետ չի փոխեր. ինչո՞ւ ուրեմն 'ի զուր կը բողոքէք:

Ձերբակալութիւնք և ճնշումք. Գարնան հետ վերստին ողջունեցին զմեզ խստութիւնք և բռնութիւնք: Դաշտի արևելեան և հիւսիսային կողմերն ալ հանգիստ լինելէ հեռի են: Կառավարութեան գաղտնի թելադրութեամբ այդ կողմերը քրդաց աւազակախումբ մը կազմված է. սոքա շատ գեղեր և մարդիկ կը թալանեն: Երբ կառավարութեան կը դիմեն, իրենց կը պատասխանեն. "Հայոց իշխաններն են": Այսպէս Բերդակ գիւղի 6 ջրաղացները կը կողոպտեն, թէ ցորենը, թէ ջրաղացի գործիքները կը տանին: Սուլթանի կառավարութիւնը կատաղաբար այս և այն կողմ կը վազէ և հանդիպածին՝ արդար թէ մեղաւոր, կը ձերբակալէ: Առուառինջ, Բերդակ, Ասաղ և Դերգեվանք գիւղերէն 12 անձ ձերբակալելով բանտի մութ և խոնաւ խորշերու մէջ կը տառապին, նոթի ու ծարաւ, առանց հարցաքննութեան. յանցանքնը ինչ է, յայտնի չէ: Բերդակ գիւղի մէջ տուրք ժողովելու պատրուակաւ չարաչար կը տանջեն մարդկանց: Աթոռի վրա կայնեցնելով՝ ամրապինդ կը կապեն սեանապա աթոռը կը վերցնեն. այսպէս կապված մարդը ժամերով կախված կը մնայ. երբեմն ալ կը ծեծեն: Այսպէս կը մեռնեն Մանուկ և Կիրակոս: Հաւատիկ մի քանի անձինք ծառերէ գլխիվայր կը կախեն և երբ արիւն կը սկսի բերաններէն հեղեղի պէս վազել, ապա կիջեցնեն. աղջիկ մը առևանգելու նպատակաւ տասնեակ գաղան եռևէն կիյնան. հայ աղջիկը լաւ կը համարի մեռնել, քան թէ անպատվիլ. բաւական տեղ փախչելէ վերջ, կը տեսնէ, թէ անհնարին է իր ազատութիւնը, զինք գահավիժելով ապառաժէ մը, կը մեռնի: Գրածս վիպասանութիւն չը կարծէք. այս կրակ ու բոցի մէջ վիպասանութեամբ պարապելու ժամանակ չունենք:

Մշոյ քաղաքի մէջ կառավարութիւնը Զալալոյեան Սեդրակ և Պօղոս մատնչաց ամսաթոշակ կապելով՝ երկու տարի է 'ի վեր հարիւրաւորներուն ձերբակալման յաջողած է: Կառավարութեան պաշտօնեաներ, երբ մէկ մը պահանջք կ' ընեն, և նա չի տար, երկրորդ օրը անշուշտ կը ձերբակալվի: Այսպէս ձերբակալված են Կտեան Սարգիս՝ հարուստ ընտանեաց զաւակն, Հայոց Միացեալ Ընկերութեան փոխ—տեսուչ Տիգրան Վար

ժապետեան և ուրիշ վեց անձինք ալ, իբր թէ սոքա յիշեալ մատնչաց վրա բէվօլ պարսկելով՝ սպանութեան փորձ ըրած են և չեն յաջողած: Ռէշիդ էֆ. անուն հարիւրապետն հարկապահանջութեան մը խնդրոյ համար, Մշոյ հինգ թաղերու մուխթարները 'ի մի հաւաքելէ վերջ, երբ կը սկսի անասելի լուտանքներ և հայհոյութիւններ տեղացնել անոնց վրա՝ օրէնք, ազգութիւն, պատիւ, ընտանիք . . . , հայերէն մինը կատաղած բոլոր հայհոյութիւնք իրեն կը դարձնէ և վրան կը յարձակի ծեծելու. ուրիշ հայ մ'ալ դրսէն հասնելով՝ կը հետևի առաջինի օրինակին և լաւ մը ծեծ կը քաշեն հարիւրապետին:

ՍԱՍՈՒՆ ապստամբական վիճակի մէջ:

Սուլթանի կառավարութեան խժդժութիւնքն ու բըռնած ընթացքն մղեցին հայ ժողովուրդը դէպ յեղափոխական կրակն ու հրդէհն: Երբ Տամատեան ձերբակալվեցաւ, երեք օր չանցած՝ Մշոյ յիսնապետ Իսկէնդէր աղան 15-20 ոստիկաններով Սասնոյ կից Շէնք գիւղի վրա յարձակում գործեց՝ գիւղի գլխաւորները ձերբակալելու նպատակաւ, քանզի նոյն յեղափոխականը Շէնք գիւղի քովերը ձերբակալված է՝ պատճառելով: Նախ հովիւներուն կը հանդիպին, կը սկսեն հրացան արձակել անոնց վրա· սոքա փախչելով՝ գիւղը հաւար կը ձգեն: Գիւղի ռէս Գրիգոր անցած գիւղացոց գլուխ առջևներն կելնէ, կը սկսի կռիւը· ոստիկանք մի գիակ թողնելով կը փախչեն:

Սասնոյ դիրքը քարուտ լինելով՝ հող չունեն գիւղացիք· ընտանեաց օրապահիկն հազիւ կրնային հայթայթել ամեն տարի Տիգրանակերտի և Մշոյ դաշտերը կարաւաններով երթալով, բայց կառավարութեան դրդմամբ քիւրդ աշիրէթներէն ճամբաները գոցած տեսնելով, այսօր լոկ բանջարեղէններով կապրին: Եթէ Տիգրանակերտի դաշտն երթան, Բագրանցի և Խիզանցի աշիրաթներէն կը կողոպտվին, կը սպանվին. եթէ Մշոյ դաշտն երթան, տաճիկ ժողովուրդ և կառավարութիւնը կը ձերբակալեն, կը կողոպտեն, կը ծեծեն, պատճառ՝ իբր թէ յեղափոխականաց ապաստարան եղած են:

Կառավարութեան ամենամեծ աշխատանքն եղաւ նախ Սասուն և Գաւառ աւերել· այս նպատակաւ Զիլանաց Շէյխ Մէհմէդին և մօլլա Ամարին հարիւրաւոր նամակներ, յատուկ տաճիկ պաշտօնեաներ դրկեց իրեն կողմ քաշելու և յաջողեց: Այդ կրօնամոլ Շէյխերն ալ ամբողջ աշիրէթներն համոզեցին, ըսելով թէ՝ քրիստոնէի կին և աղջիկ առնանգել արդարութիւն է, զայն կողոպտել Աստուածային գործ մը կատարել է, զայն սպանելով հիւրի պիտի առնէք Աստուծոյ ճէննաթին մէջ: Այսպիսով աշիրէթներն գրգռելով՝ կառաջարկեն Սասնոյ վրա քայլել, Սասունը ոտնակոխ ընել, քանզի Սասուն մտադիր է կառավարութեան դէմ ապստամբիլ· հրաման եկած է մեզ կառավարութենէն հնազանդութեան բերել . . . Այս յախուռն բազմութիւն կերդուեն 'ի միասին Շէյխի և Մեծ-Մարգարէյի անուան վրա ետ չդառնալ, մինչև Տալվորիկի հիմքը չը քակեն:

Յունիսի 14-ին Զելանցի, Ըխդադանցի, Ռաշքօնթցի, Գաստքանցի, Խիզանցի և Բագրանցի աշիրէթներն սկսան քալել դէպի Տալվորիկ: Երբ այդ ձայնը հրատարակվեցաւ, Գելիէկուզան և Շէնք գիւղերու գլխաւորներն երիտասարդները հաւաքելով օգնութեան կը հասնին 'ի Տալվորիկ: Երկրորդ օր, Յունիս 15-ին, հայոց և քրդաց մէջ ընդհարում եղաւ. թէև քրդեր շատ ու շատ էին հայերէն, բայց Սասունցիք քարանց ծերպերու մէջ մնալով՝ կը սկսեն կռիւը: Քիւրդեր երբ կը տեսնեն հայոց անակիւղ յարձակումն, ետ կը փախչին: Ճանապարհին կը պատահին Տիգրանակերտ դաշտէն եկած զօրքին, որ իրենց օգնութեան կը գար հարիւրապետ Էմեր աղայի առաջնորդութեամբ, և ետ կը դառնան: Հայոց թիւ հազիւ հասնէր 200-ի, որք ձանձրացած լինելով նեղ ու թշուառ կեանքէն, ընտրած էին մահը՝ ըսելով. "օր մը անպատճառ պիտի մեռնինք, թո՛ղ այսօր ըլլայ մեր մահուան օրը. թո՛ղ մենք մեռնենք, գոնէ մեր սերունդ ապրի մեր արիւնով ձեռք բերած ազատութիւնով:"

Յունիսի 16-ին երեք միացեալ գիւղերու երիտասարդները Տալվորիկի Մերկեր կոչված բլրակի գլուխն երեք մաս բաժանված արշալոյսին կը սպասէին կռուի ժամուն: Կանայք կը խրախուսէն ըսելով. "քաջ եղէք, պատուով մեռէք, մեր Մարաբէն ձեզ օգնական:" Վերջապէս Յունիսի 17-ին թան ու թանահար նախաճաշիկ ընելէն վերջ, ժամը երեքին բացվեցաւ կռիւը: Քաջ Սասունցիք իրարու ձայն և խրախոյս տալով գնաակները թշնամու վրա կը թափեն: Քիւրդք իրարու վրա կը գլորվին, բայց չեն նահանջել, այլ Մօլլա Օմարի առաջնորդութեամբ հայերին չորս կողմէն կը պաշարեն, ուստի հայերը յետ կը նահանջեն Տալվորիկի ամուր ապառաժներու մէջ և կը սկսեն աւելի սաստիկ կռիւ. Սասունի կանայք ալ կօգնեն իրենց երիկներին: Այն գիւղեր, որ քիւրդեր տիրել էին հայոց յետ նահանջման ժամանակ, Շէյխի և կառավարութեան պատուիրանաց համեմատ, տուներ կայրեն, կանայք և աղջկունք ապառաժներէն վար կը ձգեն, մանր տղաք կըտրատելով ջուրերու մէջ կը թափեն . . .

Վերջապէս կը հասնի գիշերը, քիւրդեր կը նահանջին, պատահած ոչխար, տաւար, ջորի, զանազան իրեղէններ հետներն առնելով: Քրդերէն սպանված է 50-էն աւելի. հայերի թիւն ալ կը հասնի 50-ի. ատոնցմէ զատ շատ մը կին ու աղջիկ ապառաժներէն վայր գլորվելով՝ կը մեռնեն, և երեխաներ ջուր կը թափվեն: Հայոց գլխաւորներէն կը սպանվին Մկրտիչ Յովհաննիսեան Կէլիէկուզանցի, Տալվորիկցի Քէլեանց Մկրէեան Խաչօն, Տէրտէրեան Պողոս անուն երիտասարդները: Քէլեանց Մկրէն կուէն օր մը առաջ կը պոռար. "մէ հատիկ որդի ունեմ և զայն ազգին զոհ կուտամ": Կէլիէկուզանցի Մկրտիչն կասէր. "Ուխտած եմ ազգին և այսօր կը կատարեմ իմ պարտքը:"

Այս մեծ կռիւ հայերուն մեծ ոգևորութիւն պատճառած է, իսկ կառավարութեան կատաղութիւն: Նա սկսեց զօրք հասցնել Սասնոյ շրջակայքը: Մշոյ ժողովոյ անդամ Դալիպ էֆ. և հարիւրապետ Հաճի էֆ., որոնք յայտնի են իրենց խժդուժութեամբ և հարստահարութեամբ, 30 ոստիկանով կերթան Կէլիէկուզան գիւղի ռէս Պետոյի տուն: Պետոն և իր եղբօր տղայ Աւօն ընկերաց պաշտպանութեամբ կը փախչին և կը պահվին: Ոստիկաններ կը սկսեն կողոպտել-իւղ պանիր, ոչխար, տաւար, հաց և այլն: Գիւ-

ղացիք գլխաւորներու և զօրքի վայրենութիւնները տեսնելով, սարսափահար, մերկ ու բոբիկ լեռնէ լեռ կը փախչեն: Երկու օր վերջ հասան 200 զօրք. Մշոյ կողմէն ալ 300 հոգի հասան, իսկ 400-էն աւել Կէնճի կողմէն: Այժմ Տալվորիկի 7 գիւղերը և նրա շրջակայքը գտնված Շէնք, Սէմալ, Ալեանցիկ, Կիւլիէկուզան, Աղբիկ, Խաան, Եղկարտ գիւղերը պաշարման վիճակի մէջ են: Սասունցիք փախստական, թշնամիներէն պաշարված, քարանց ծերպերէն հաց, հաց կը պոռան . . .

Բաղէշի կուսակալ ալ 160 ձիաւորով Գաւառի Սէմալ գիւղի մէջ նստած մէկ կողմէ կանոնաւոր զօրք կաւելացնէ: Կատը-քանցի աշիրէթը կանչելով՝ Շէնք գիւղի մէջ լեցուցած է: Քիւրդերը վալիի առջև հայ գիւղերու մէջ վայրենութիւններ կընեն՝ պար, խաղ, ուրախութիւն ընելով:

Տարոնոյ ամէն հայ գիւղերու մէջ քրդական բանակներ լեցուցած, բացարձակ ճնշման հրաման տուած է: Մուշ քաղաքի մթերանոցի զէնքերը տաճիկ ժողովրդին ցրված է: Բաղէշի վալին, որ Սէմալ գիւղի մէջ նստած է, իրմէն մի քանի քայլ հեռու Շէնք գիւղէն, Պասը-քանցի հռչակաւոր աւազակ Մարօն ցերեկով 9 տաւար կը տանի և Յակոբ Տէր-Առաքելեան անուն երիտասարդն ալ թրով կը կտրատի. նոյնպէս Ալեանցիք կոչված թաղի վրա յարձակվելով՝ Մարտիրոս Հպտեան կը զարնեն և քանի մ'ալ տուն կը կողոպտեն: Խալբայ ձորի երկայնութեամբ, Կալիէմնուր հայաբնակ գիւղի վրա յարձակվելով, Սահակեան Թաթօ և Խզօ հայերուն երկու եզ կը տանին, և երբ սրանք ուրիշներու օգնութեամբ կը ջանան ետ առնել, Մանուկ հայն ալ վիրաւորելով, կերթան: Կը կողոպտեն Նօթէյի տունն ալ: Երբ այս ամէն չարեաց վրա վալիին կը բողոքեն, կը պատասխանէ՝ թէ դեռ այսչափը ձեզ համար քիչ է: Այժմ Տարոնոյ որ հայն է, որ արտասուք չը թափէր, որ մայրն է, որ իր որդին չիլար, որ կոյսն է, որ իր կորցրած կուսութիւն չաղէր . . . Կառավարութեան, վալիի և Մուստաֆա փաշայի անտանելի, բարբարոս վայրենութիւններն են պատճառ Սասունի, Տարօնի այսօրուայ կուին, ապըստամբութեան . . .

ՔՐԴԱՑ ԱՐՇԱՐՔՆ ԻՆԴԱՀՏ

Սասուն այսպիսի դրութեան մէջ կը տատանուէր, երբ միւս կողմից Համիդիէյի հեծելազօրքը, օրինակ վերցնելով Աշիրէթներից, կը յարձակուի դաշտի գիւղերի վրայ կողոպտելով և կրակի մատնելով ամէն ինչ: Խեղճ Հայ գիւղացին չգիտէր ինչ անել. գլխիկոր, ձեռները ծոցը դրած իր պլրուող աշխատանքի առաջ կանգնած՝ աղիողորմ կերպով կողբար:

Տատրոգոմ՝ գիւղի քովը մի քիւրդ կին, տեսնելով մի քանի հասարակ ճանապարհորդներ, կը վազէ գիւղն ըսելով. "Ռուսիոյ մարդ մը տեսայ": Իսկոյն քրդերն ահագին բազմութեամբ կը պաշարեն գիւղը՝ չնայելով, որ զանոնք կը ճանաչեն և քովերն ալ բան մը չեն գտներ, այնուամենայնիւ կը յարձակին հայերու վրայ ու քանի մը հայ վիրաւորելով, գիւղն աւարի առնելով՝ կը դառնան: Հայերը կը դանգատին հարիւրապետ Իսկէնդէրին, բայց նոցա խընդիրքն ապարդիւն կանցնի:

Համիդիէյի հեծելազօրքի հարիւրապետ Իպօի աւազակային խումբը, օր ցերեկով յարձակուելով Պագլու գիւղի վրայ, 21 գլուխ կով ու եզ կը տանի: Երբ կողիմեն հաջի Ֆէյին՝ կըսէ. այդ քիւրդեր զսպել մեր կարողութենէ վեր է:

Սոյն խումբը յարձակուելով կրկին Հայկերտ ու Գոմս գիւղերի և խումբ մը պանդխտութենէ դարձող խեղճ հայերու վրայ՝ գիւղացիներու ոչխարներն ամբողջովին կը տանին, իսկ դարձող պանդուխտ մշակներէն՝ երկու ձի, ջորի մը և 80 ոսկիէ աւելի ստակ կը խլեն:

Դաշտի հարաւ-արևմտեան լերանց ստորոտներ գտնըւող գիւղեր ո՛րը քիւրդերու յարձակումներէ, ո՛րն ալ կառավարութեան ոստիկաններու աւարառութենէ քար ու քանդ եղան: Մշոյ ոստիկանութեան հարիւրապետ Իսկէնդէրը 20 ոստիկաններով այս գիւղերը կը շրջի. հայհոյանք թափելով գիւղացոց վրայ՝ գիւղէն դուրս կը քշէ հարկ ճարելու համար. իսկ ինքը ոստիկաններու հետ կերթան նոցա կանանց քով՝ ամուսիններուն փոխարինելու: Խեղճ հայ կինն անպատուած, արցունք աչքերուն, հեկեկալով, քրդի բազկաց մէջ կանիծէ իր վիճակը:

Ղզլաղաճ գիւղէն տարիէ մի վեր 2 փախստականի պատճառով, գիւղի գլխաւորք՝ Յովհաննէս, Առաքել, Գէորգ և Արթին, ձերբակալելով, Մշոյ բանդը կը ղրկեն. յետոյ փախստականներու եղբայրները կը պահանջեն, բայց նոքա կը փախչին, որի պատճառաւ և կը սկսեն ամէն պատահողի ձերբակալել: Այս ձերբակալածներէն Խաչիկ ու Կարապետ երիտասարդներէն աքցանով ակռաները կը քաշեն և այնքան կը տանջեն, որ կիսամահ վայր կընկնին:

Առաքելը Մուշ բանդարկելէ վերջ, Մէհմէտ անուն քիւրդը մարդ ղրկելով անոր կնոջ քով, կը խոստանայ ամուսնուն բաց թողնել, եթէ թոյլ կը տայ միայն առևանգել զինքը: Առաքելի կինը հայհոյելով դուրս կանէ եկած մարդուն և չնդուներ նորա առաջարկը:

Տատրոգոմ գիւղէն ձերբակալած են Դաւոյ, Սահակ և Առքէ անուն երիտասարդները, Սուլթանէն պատուանշան մը կորզելու մտադրութեամբ:

Լուր կը պտըտի, թէ կաշառք կուզեն, որ Գզը-Աղաճ գիւղի ձերբակալք արձակեն:

Այս ձերբակալեալք ու փախստականք մատնած են Գոմեր գիւղի Տէր-Սարգիս և Ս. Յովհաննու վանուց վանահայր Մկրտիչ վարդապետ Գասպարեան, որք այժմ սիրելի են յաչս կառավարութեան:

Կախսէրդէրի խումբը, որ վերջերս եկած է իբր թէ Հայերուն պահպանելու, Խէյպան գիւղացի Առաքել Տէր Աւետիսեանը կը ձերբակալէ Մուշի մէջ բանտարկուած Տէր Ներսէս Խարախանեանի անունը տալու համար:

Փողարկով գիւղի մէջ Մուրադ Հազրոյեան անուն երիտասարդի մը ծեծելով խոտի կուղարկեն. երբ նա կերթայ քանի մը քայլ՝ մարթինի հրացանով գետին կը փռեն՝ արագ չգնալուն պատճառով:

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

Գաւառներու մէջ թիւրքերու բարբարոսական վարմունքը հայ բանտարկեալներու դէմ հանրածանօթ է: Պակաս չէ և Պոլսում: Նոյեմբերի վերջերին հետևեալն է տեղի ունեցած տեղոյս բանտերէն մէկու մէջ հայ բան-

տարկեալներու հետ, որ յայտնվեց, չընայած կառավարութեան ձեռք առած խիստ գաղտնապահութեան այդ մասին: Հայ բանտարկեալներու հետ ունեցած այդ խիստ դիժական վարմունք ամենուրեք յուզում, զայրոյթ և զզուանք առաջ բերաւ դէպի կառավարութիւնը և մեծ կարեկցութիւն դէպի հայ բանտարկեալները:

Ահա դէպքը.—Այա-Սոֆիի քովի բանտի մէջ կը գտնվին մօտ 500 հայ բանտարկեալներ(Պոլսի բանտարկեալների 100-էն 95-ը հայեր են): Ցիշեալ բանտի հայերը լուր առնելով, որ Պոլսի մէջ քօլերան կը ճարակի և բազմաթիւ զոհեր կը տանի, կը սարսափեն: Իրենց ահագին թիւը տառէխի պէս իրար վրա դիզված է. բանտի աղտեղութիւնը, ապականված օդը, վատթար սնունդը, մարմնի անմաքրութիւնը, լաթերու աղտոտութիւնը,- այս ամենը վարկեան մը առջևնին պատկերելով, մահերն կը տեսնեն և կը խորհեն կերպով մը դարմանել իրենց թշուառ կեանքը: Կը խորհրդակցին դիմում մը ընել կառավարութեան և աղերսել կամ իրենց ուղարկել աքսորավայրերը համաձայն տրված վճիռներուն և կամ իրենց վիճակը բարւոքեն: Երկու խնդիրներն ալ անլսելի կը մնան: Ասոնք մեծաւ մասամբ դատապարտված են՝ որը բերդակալութեան, որը բանտարկութեան, որը աքսորի. բայց ցարդ կը պահվին Պոլսի բանտերի մէջ: Ամենուրեք բանտերը լեցուն են, մինչև իսկ վերջերս նոր բանտեր կառուցանելու հրամաններ եղաւ. քանի մը տուներ բանտի փոխարկված են: Մերժումը կը յուսահատուցանէ բանտարկեալները: Ասոնք յուսահատական ցոյց մը կընեն և 2 օր կը մերժեն իրենց տրված ցամաք հաց ու ջուրը և կը պահանջեն, որ իրենց խնդիրները լսվեն և գործադրվին. հակառակ պարագային նախապատիւ. կը համարեն անօթութենէն մեռնել, քան թէ քօլերայէն: Ամեն տեսակ սպառնալիք, հայհոյանք ու անարգանք անօգուտ կանցնին: Կառավարութիւնը եղելութիւնը կիմանայ, Եղզատի վերջին դէպքերէն կատաղած, խելակորոյս հրաման կարձակէ ջարդ մը, ծեծ մը քաշել բանտարկեալներուն: Բանտապետը զապտիաներու հետ՝ զինված խարազաններով, մահակներով և հրացաններով ներս կը մտնի բանտը և վերջին անգամ կը հրամայէ խոնարհվիլ և հաց ու ջուր ընդունել: Բանտարկեալները նորէն կը մերժեն և կը պնդեն, որ իրենց պահանջները կատարեն: Բանտապետը կրակ կը կտրի բարկութենէն և կը հրամայէ զապտիաներուն սկսել ջարդը: Ան ատէն կը բացվի սոսկալի, քստմնելի տեսարան մը, որ ըստղի վրա անգամ սարսափ կազդէ: Այդ միջոցին բանը կատարեալ դժոխքի փոխված էր.-զապտիաները սոսկալի ջարդ մը կը սկսեն: Բանտարկեալներու վայնասունը, գոռում-գոչումը երկինք կը հասնի. բանտապետը ոգևորված այդ արտակարգ տեսարանէն և աղիողորմ ձայներէն, որոնք երաժտութենէն աւելի քաղցր կուգային բանտապետին, կանգնած տեղէն կորոտայ եղեր.- վո՛ւրն, վո՛ւրն... Ջարդը կը տևէ այնքան, մինչև զապտիաներ կը յոգնեն և բանտարկեալները կը մարեն, կը լռեն... Շատերը անշնչացածներ են. բատարկեալներու վրա ողջ տեղ չէ մնացած. մի քանիսը հիւանդանոց փոխադրած են. գուցէ և մեռած են՝ յայտնի չէ:

Եւ այս խիստ դիժութիւնը տեղի կունենան Սուլթանի մայրաքաղաքի մէջ, դեսպաններու աչքի առջև, Եւրոպայի քթի տակ...

— Մի քանի ժամանակ սրանից առաջ թիւրքերը ազդագրերը փակցուցած էին Սուլթանի դէմ: Արդի կառավարութեան ու Սուլթանի դէմ են այժմ թէ ազատամիտ և թէ պահպանողական կուսակցութիւնները: Կը կասկածվին որպէս հեղինակ ազդերու սոֆտաները: Կըսվի թէ բաւական ձերբակալութիւններ, աքսորներ և մահեր եղած են, բայց ամենախիստ լռութիւն և գաղտնապահութիւն գործ կը դրվի:

— Գաւառները կատարեալ սով է, բայց կառավարութիւնը կը ծածկէ և արմատիքի սղութեան կը պատրուակէ: Պատրիարքարան բազմաթիւ աղերսագրեր ստացված են առաջնորդներէն և ժողովներէն, որոնցով փութաջան օգնութիւն կը կանչեն: Կառավարութիւնը, որ անշնչան ցորեն փոխադրած է, մահմեդականներուն կը բաժնէ, խտրութիւն կընէ: Պատրիարքարանը անցեալները թոյլ դիմում մը կընէ, բայց անօգուտ. այս դէպքերին շուրը նշանակութիւն, պատիւ ունէ, Աշըղեան ոչ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՂԶՎԱՆ. — Սահմանագլխում պառապան կողակների եւ մի խումբ քիւրդերի մէջ կռիւ է պատահել, որին առիթ են տուել քիւրդերն առաջին անգամ հրացան ձգելով: Քրդերից 3 հոգի սպանված են, որոնց դիակը բերել են Կաղզվան. որանցից մէկը տաճկական կանոնաւոր զինուոր է: Ռուսաց կառավարութիւնը պաշտօնապէս բացատրութիւն է պահանջել Ցաճիկ կառավարութիւնից, թէ ձեր զինուորը քիւրդ աւազակների մէջ ինչ է չինում, որին պատասխան է ստացել, թէ երեւի որսի է եղել հեռները....

Սահմանագլխի ռուսաց գունդը խիստ զրգռված է քիւրդերի դէմ, որոնք նոյն օրը նորից մի կողակ են սպանել:

ԱԼԱՇԿԵՐՏ. — Սովն աւելի սուր կերպարանք է ստանում, մանաւանդ Ղարաքիլիսայի գայմագամութեան մէջ, Խեղճ գիւղացին դիմում է դէպի սար, հաւաքում գաղ, (փշի նման է) փշկով կերակրում ընտանիքը, իսկ մնացածը մանրացնում եւ դարմանի հետ տալիս տաւարին: Բաւական չէ, որ վզակոր գիւղացին միջոց չունի իր թշուառ գոյութիւնը պահպանել — նրան ստիպում են պահել եւ քրդերին. Ռուսաստանից գաղթած եւ տեղացի քիւրդերը, որոնք միւս տարիներ գնում էին իւրեանց ձմերանոցներ, այս տարի Թահմի փաշայի եւ գայմագամի շնորհիւ մնացին եւ նրանց ձմերանոցներ եղան հայերի տները: Քիւրդեր հայ գիւղացու եւ ընչքի տէրեր են դառնում: Պատուից եւ իրաւունքից զրկված գիւղացին զրկվում է եւ իր աշխատակից կենդանիներից. մէկը միւսի ետեւից ստանում են, եւ քաղցած տէրերը հիւանդ կենդանու միս ուտելով, հիւանդանում են ընդհանրապէս ջուլ եւ փոր լուծութիւնով, միայն մանաւանդ դէպքեր յաճախ չի պատահում: Բացի դրանից, այն քիւրդերն, որոնք տան մէջ են, գիշերով մորթում են անխիղճ կերպով առողջ տաւարին, ասելով որ սատկում էր, մորթեցինք.... Մինչեւ անգամ քիւրդ երեխայք ետ չեն մնում իրանց ծնողներից. կերակուրը դեռ չեփած՝ արդէն վերջանում է. ամեն մի երեխայ կերակուրն առաջը դնելով, ուտում է, իսկ տան տիրոջ երեխաները, վախից դռան ետեւից կուչ եկած, նայում են միայն. եթէ համարձակվեն ասել, թէ մենք էլ քաղցած ենք, մեզ էլ տուէք ուտենք, այն ժամանակ կամ կինը կամ երեխաներից մէկը յարձակվում է եւ ծեծում, մինչեւ որ երեխան ստիպված կլրի. իսկ մայրը նայում է եւ լաց լինում...

Քիւրդերի վայրենի վարմունքին հակառակողները կամ

բողոքողները ծեծվում, պատժվում, տուգանքի են ենթարկվում եւ բանտ նստում։

Ահա այդ կեանքից ազատվելու համար բաւականին թւով գիւղացիներ իրանց ընտանիքներն առած գալիս են ցուրտ ձմեռով դէպի Ռուսաստան։ Կարմիր վանքի մօտ քիւրդերը յարձակվում են ոտգա վրայ, թալանում եւ սպանում. միայն երկու կին են ազատվում (Զաքի կինը եւ Քէյրօյի հարը), երկուսն էլ վիրաւորած. խփելու ժամանակ ուշագնայ են լինում եւ կարծելով, թէ մեռած են, թողել են։

Սինաքայ եղիզ քիւրդերը աղ են տանում եղել Աւլաչկերտ ծախելու։ Վերադառնալու ժամանակ վանքի մօտ պատահում են անշնչացած դիակներին, վեր են առնում, խնամքով բերում Սինաք։ Քէյրօյի հարը այժմ գտնվում է Կողբում, իսկ Զաքի կինը ծանր վիրաւորված Սինաք Շէխ-Զուլայի գիւղումն է։ Վեհարանի եւ վանքի տակ լինելն են գաղթական Աւլաչկերտցիներ։ Ասում են, որ նահանգապետը մտադիր է այս ձմեռ եւ դարձնել բոլորին։

ԱՐՃԷՇ. — Սեպտեմբեր ամսու մէջ Ցարթին գիւղում եօթը գլխված քիւրդ երեսները կապած, կէս գիշերին կոտրում են վանեցի Մահտեսի Նալբանդեանի եւ իր ընկերոջ տան դռները. մերկ սրերը դնում են սրանց բկերին եւ սպառնում վզները կտրել, եթէ ձայն հանեն։ Մնացած հինգ քիւրդերը այս խեղճ սուեւտարականների բոլոր ապրանքները սրբում են։ Նալբանդեանի երիտասարդ ընկերը փորձ է անում խնդրել, որ դութ ունենան, մի բան թողնեն։ Բարբարոսները սրան այնչափ են ծեծում, որ ուշաթափ վայր է ընկնում։ Միւս օրը թալանվողները բողոքում են Թարուր աղասուն, որ Վան քաղաքի հին Թարուր աղասի Դելավար օղլին է։ Կողոպտվածները հանդիպում են մի փորձված գիւղացու, որն իրողութիւնը լսելով՝ ասում է. „Եթէ ձեր ձեռքով կարող էք մի բան անել, արէ՛ք, թէ չէ հոս դատասան չը կայ։ Գլխաւոր աւազակը Դելավար օղլին է, ոստիկանապետը, որն եկած է իբրեւ թէ մեր երկրում խաղաղութիւն պահպանելու։ Նա ինքն է Համիդիէ քիւրդերից աւազակներ պահող եւ բանացնողը։

Արճէշի բոլոր գիւղերում կալերի ժամանակ տարածվում են Հէյդարանցի քիւրդերը եւ անխտիր ամեն ունեցող գիւղացուց 30-էն 50 փութ ցորեն տանում։ Իրենք Համիդէի զօրք են եւ զինված, մերժողին մահ են սպառնում։ Պատահում է, որ միեւնոյն գիւղացին երկու երեք անգամ այդ բռնի հարկը տալիս է։ Շատ գիւղացիներ հայից զրկվելով՝ մօտակայ քաղաքներն են փախչում։

Նոյն Ցարթին գիւղում Օգոստոսի վերջերին գիւղի քահանայի եղբօր երեք որդիքը գոմէշներով դաշտից ցորեն են բերում։ Քիւրդերը դարան մտած լինելով յարձակվում են սրանց վրա եւ գոմէշները քշում։ Երեք եղբայրներն եւս ընկնում են սրանց ետեւից, քարով հալածում ու մինչեւ իսկ երեք գոմէշները ետ դարձնում։ Քիւրդերը տեսնելով, թէ առանց զէնքի դիմելու իրանց չպիտի յաջողի աւարը տանել, կրկին յարձակվում են եւ դիմադրութեան ժամանակ մէկին գետակով գետնին գլորում ու գոմէշները տանում։

— Սեպտեմբերի մէջ քրդերը մի պարտիզպանի սպանում են։ Ամբողջ գաւառի մէջ ամենայն օր մահն ու թալանն անպակաս է։

— Սեպտեմբերի 20-ին Հասպարան գիւղում գիշերը քրդերը մտան Յակովբ Թուխլուղեանի եւ նրա ընկեր Ներսէսի խանութը, Յակովբի գլուխը կտրեցին եւ բոլոր ապրանքները մօտ 40 լիրայի, տարան։ Քրդերը չբաւականացան սրանով, կողոպտած էին եւ խեղճերի հագուստները, թողնելով միայն տակի շապիկն ու վարտիկը։ Հետքից հասկացած էին, որ մօտակայ գիւղի աւազակ Շաւէշի մարդիկն են, բայց ո՞վ է աւազակների փնտռող կամ պատժողը։

— Հոկտեմբերի սկզբներին Հայոց Զորի մէջ Խեքայ նախիրը եւ Քերծայ ոչխարները տարան քիւրդերը։

— Հոկտեմբերի 7-ին Փեսանդաշտ կոչված գաւառակում Շեսան գիւղի 700 ոչխարները քիւրդերը տարան։

— Հոկտեմբերի 6-ին առաւօտեան արշալոյսին Շուշանց գիւղի ոչխարները տարան եւ հովիւը վիրաւորեցին։ Շուշանց գիւղը բոլորովին մօտ է քաղաքին։

— Հոկտեմբերի սկզբներին Խոշաբ գաւառի Քոսկ եւ Հիւրթուկ գիւղերի ոչխարները տարան։

— Նորգեղայ գեատուկի (կիրճ) վրայ դրված կօրգօնը տեղափոխեցին Վարագայ վանքը։ Կարմրաւոր վանքինն էլ արդէն փոխադրուած է վանքը։ Այն երկու վանքերը միմեանցից 1 ժամ հեռի են։ Մնում են դեռ Խոշգեատուկի, Արճակի եւ այլ տեղերի կօրգօնները։ Կօրգօնների պահապան զաֆտիաները բոլորն էլ բռնութիւնամէջ ապրում են վանքերի եւ գիւղերի հաշուով։

— Արճէշ գաւառի երկու մեծ աւաղակները (Համիդիէ զօրքի փաշաները) Էմին եւ Հասան փաշա 91 թ-ին իրենց աւերմունքների եւ սպանութիւնների պատճառով կառավարութիւնն իրը թէ աքսորեց։ Մի քանի ամսից յետոյ դրանք գաղտագողի վերադառնում են Արճէշ եւ Նորին չարունակում իրենց նախկին հարստահարութիւնները։ Պատմում են թէ այս օրերս Էմին փաշան ձերբակալված է, բայց Հասան փաշան դեռ կը մնայ։

ՎԱՆ. — Վալի Բահրի փաշան ամիս եւ կէս է դուրս է եկած գաւառները զրգռված ժողովրդին խաղաղացնելու, երկրին ցաւերը նոյն իսկ տեղի վրայ տեսնելու եւ հոգալու։ Ճիշտ է ասել քիւրդերու մէջ ներքին կռիւ մը առաջացնելու եւ հայոց դէմ զրգռելու համար։

Ո՛չ մի հայաբնակ տեղ կանգ չէ առած. իւր ճանապարհորդութիւնն սկսեց Վանի հիւսիս-արեւելեան կողմից, Ապաղա գաշտ, Սարա, Աղբակ, այս տեղերէն պիտի իջնի Շատախ եւ Ռշտունիք։ Վալիի բռնած ուղեւորութեամբ այս գիծը Տաճիկ-պարսկական սահմանի վրայ կիյնայ, ուր շատ քիչ հայ կայ եւ բոլոր տեղերը քիւրդերով բռնված են։ Հեռու տեղերէ խումբ քիւրդեր կը հրաւիրէ եւ հրահանգ կուտայ. կ'երդուեցնէ համիդիէ քիւրդ զօրքերուն հաւատարիմ մնալ կառավարութեան։ Բաշկալա եղած ատեն Ասորոց Մարշիմոնին հրաւիրեց եւ երկար ժամանակ բռնի կը պահէ, ասոր համար Ասորիները շատ գրգռված են։ Եղիսների ցեղապետին բանտարկեց եւ բռնի կը ստիպէ իսլամութիւն ընդունել։ Պարզ կ'երեւի, որ կառավարութիւնը կաշխատի պետութեան զանազան տարերաց մէջ յուզում յառաջ բերել։

Շարունակում ենք 3-դ համարից ընդհատված նուիրատուութեանց ցուցակը։

Մրզ.-ից 203ր. Զ.քթ. 100ր. Կ. 40ր. Փունջ 19ր. 5կ. Մաճկալ 16ր. Հայաստան 36ր. Խաչագող 120ր. Ախ. 600ր. Արմ. 500ր. Ռ.ք. 63ր. Կրսբ. 1000ր. Գնկ. 170ր. Շէն գ. 40ր. Սպ. 1000ր. Տմ. 260ր. Նվ.ր. 50ր. Ան. 55ր. Լգ. 32ր. Ստպ. 240ր. 2. գիւղ 181ր. Արձան 20ր. Ծառ 80ր. Գդ. 270ր. Նխ. 2123ր. N. 20ր. Կայծիկ 50ր. Ռ.ք. 30ր. Խումբ №1 40ր. Կայծիկ 140ր. Անթ. 14ր. Հաւատ 16ր. Զնդան 23ր. Մուրադ 10ր. Իւսֆ. 10ր. Բախ. 1000ր. Վ.Է. 100ր. Պ-ից 15ր. Աղ. 13ր. 20կ. Անդր. երկ. 2115ր.

(կը շարունակվի)

Տեղի սղութեան պատճառով անկարող եղանք հրատարակել ներկայ համարում Վասպուրականից ստացած թղթակցութիւններն ու տեղեկութիւններն, որոնք լոյս կը տեսնեն առանձին յաւելուածով Փետրվարի սկզբին։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թղթակցութեան եւ նուիրատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd., Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան